

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հոկտ. 17 մաճիթեսլը:—Ենթակալաւ թեսն եւ յեղափոխութեան պայքարի վրայ յետապարձ հայեացք:—Հասարակութեան տնտեսական կազմի դերը յեղափոխական շարժման մէջ:—Հոկտ. 17-ի մաճիթեոսից յետոյ:—Սահմանադիր ժողովի անդամնեւութիւնը:—Թուրքական արշաւանքը Թիֆլիսի վրայ:—Հին բէժիմ եւ հասարակական խոճի դատաստան:—Համակովկասեան ժողով:—Գայլերի զիսին աւետարան եւ զինուած խաղաղութիւն:

Հոկտեմբերի 17-ի մանիքնստու.

Աստուծոյ ողորմածութեամբ Մենք ՆԻԿՈՂԱՅ ԵՐԿՐՈՐԴ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիայի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Ռիխան Ֆինլանդիայի և այլն և այլն և այլն:

Ցայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. Մեր կայսրութեան մայրաքաղաքներում և այլ շատ տեղերում խանակութիւններն ու յուղումները մեծ և ծանր վշտով են լցնում Մեր սիրութ: Ռուսաստանի վեհապետի բարօրութիւնը անխօնելի կապուած է ժողովրդի բարօրութեան հետ, և ժողովրդի վիշտը՝ Նրա վիշտն է: Այժմ ծագած յուղումներից կարող է առաջ զայ ժողովրդական խոր անխխանութիւն և սպառնալիք Մեր գետութեան ամբողջութեան ու միութեան:

Թագաւորի ծառայութեան մեծ ուժաբը հրամայում է Մեզ՝ Մեր բանականութեան և իշխանութեան բոլոր ոյժերով ձգտել տէրութեան համար այդքան վտանգաւոր խանակութեան ամենաշուտափոյթ խափանման Հրամայելով պատշաճաւոր իշխանութիւններին. միջոցներ ձեռք առնել՝ անկարգութիւնների և բռնութիւնների ուղղակի արտայայտութիւնները վերացընելու, ի պաշտպանութիւն խաղաղ մարզկանց, որոնք ձգտում են իւրաքանչւրելի վրայ ընկած պարտը հանգստորէն կատարելու, Մենք, պետական կեանքի խաղաղացման նպատակով Մեր նախորոշած ընդհանուր միջոցների յաջող իրագործման համար, անհրաժեշտ համարեցինք միացնել բարձր կառավարութեան գործունէութիւնը:

Կառավարութեան պարտականութեան վրայ ենք դնում Մենք ի կատար անել Մեր անկորանալի կամքը.

1) Շնորհել ազգաքնակութեան՝ քաղաքացիական ազատութեան անսասան հիմունքները՝ անձի իսկական անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի, ժողովների և դաշնակցութիւնների ազատութեան սկզբունքների վրայ:

2) Զդապարեցնելով Պետական Դումայի համար արքէն նշանակուած քնարութիւնները, այժմ և եթի Դումայում մասնակցելու նպատակով՝ կոչել—ըստ կարելութեան, որ համապատասխանում է մինչև Դումայի գումարումը մնացած ժամանակի սղութեան—ազգաքնակութեան բոլոր դաստիարակե-

բը՝ որոնք այժմ բոլորովին զրկուած են ընտրողական իրաւունքներից, իսկ ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքի յետովուայ զարգացումը թողնել նոր հիմուած օրէնքպական կարգին:

3) Հաստատել իբրև անհասան կանոն, որ ոչ մի օրէնք չկարողանայ ոյժ ստանալ առանց Պետական Դումայի հաւանութեան և որ ժողովրդից ընտրուածների համար ապանոված լինի հնարաւորութիւն իրական մասնակցութեան Մեղնից գրուած իշխանութիւնների գործողութիւնների օրինաչափութիւնը վերահսկելու գործում:

Հրաւիրում ենք Ռուսիայի բոլոր հաւատարիմ զատկներին յիշել իւրանց պարագը գէպի հայրենիքը, օքնել դադարացնելու այս զնուած խառնաշփոթութիւնը և Մեղ հետ միասին լարել բոլոր ոյժերը՝ վերականգնենելու հանգստութիւնը և խաղաղութիւնը հայրենի երկրում:

Տուած է Պետերհոգում Հոկտեմբերի 17-ին 1905 թ. Թր. ծն., իսկ Մեր թագաւորութեան 11-րդ տարին:

ՆԻԿՈՂԱՅ.

Այդ մասնիֆեստի նշանակութիւնը լաւ ըմբռնելու համար մի յետադարձ հայեացը գցենք անցեալի վրայ:

Դարերի ընթացքում ոռւս ինքնակալութեան ձեռք առած բոլոր արգելքներն ու խատութիւնները, ինչպէս և ժողովուրդը թաթարա-ըրիւզանդական ըեծիմի միջոցով այլասեռելու հրէշաւոր ջանքերը, անկարող եղան խեղդելու ոռւս ժողովրդի առանձին շերտերի աղատական փորձերը: Եթէ Ստենկա-Ռազինի կամ Պուգաչովի առաջնորդութեամբ գիւղացիական-կազակային խառնակ, տարերային ապստամբութիւնները հզօրապէս ճնշուեցան, եթէ «գեկաբրբիստների»՝ այդ զինուորական-ազնուական իստելիգենցիայի դաւադրութիւնը Զախշախուեց (1825 թ.), եթէ 1848 թուի եւրոպական յեղափոխութիւնից յետոյ Նիկոլայեան ըեծիմը գրակոնեան խստութիւններով սպանեց ոռւս եւրոպայամիտ գրականութիւնը, անզօր գտնուելով միաժամանակ լւեցնելու և Գերցէնի ԿՕԼՈԿՈԼ-ի ճայնը արտասահմանից, —չաէտքէ մոռանալ որ վերջ իվերջոյ ինքը ճորտատիրական-զինուորական ինքնակալութիւնն ևս պէտք է հանդիպէր իւրերի այնպիսի դրութեան, երբ այլևս ոչ մի կերպ չէր կարելի հակառակել ժողովրդի կեանքի մէջ, տնտեսական և մտաւոր փոփոխութիւնների շնորհիւ, առաջ եկած ոյժերի գործի դիմաց. բաւական էր զրա համար որ հնի սահանկութիւնը մի որևէ կատաստրոֆով բացարձակապէս արտայայտուէր: Պատմութեան մի այդպիսի հատուցման մոմենտ էր 1856 թ. Սևաստոպոլեան պարտութիւնը...

Նիկոլայ Առաջինի յաջորդ Ալեքսանդր Երկրորդը այլևս չէր կարող շարունակել հին ըեծիմը. նա ստիպուած էր տալու ոչ մի-

այն ճորտերի ազատութիւն, այլև քաղաքակիրթ կեանքում անհրաժեշտ ճանաչուած մի շարք «մեծ ըեփորմներ»: Թէկ հասարակութեան դասակարգային փոփոխութիւնները աւելի լայն ըեփորմներ էին պահանջում, սակայն նրա կազմութեան մէջ առաջ եկած ոյժերը դեռ թոյլ էին ստիպողական դիրք բռնելու:

Այդ ըոֆորմների շնորհիւ Ռուսաստանում իր առաջնակարգ դիրքից ընկաւ ազնուականութիւնը, իսկ մինչև այդ թոյլ արդիւնազործական-առևտորական դասակարգը և գեղովկատ շերտերից դուրս եկած ինտելիգենցիան զարգանալու ահագին զարկ ստացան: Արագ-արագ առաջ զնաց հասարակական կազմի հսկայական փոփոխութիւնը. ազատուած գիւղացիական դասակարգի կողքին, ազատ աշխատանքի շնորհիւ, երեան եկաւ և բանուորական դասակարգը:

Չմոռանանք որ «մեծ ըեփօրմների» հետ ուուս ինքնակալութիւնը նոր կեանքի մէջ կարողացաւ պահպանել ժանգուածու ու մեռած անցեալի ամենազարելի կողմը, այնէ պոլիցիական բիւրոկրատիական սիստեմով կառավարելու ձևը: Հասարակութիւնը չստացաւ սահմանադրական և ոչ մի երաշխաւարում: Այդպիսով, նոր գինին ածուեց հին, նեխուած տկի մէջ, Բնականաբար, հին ըեժիմի այդ մնացորդը փոտում առաջացրեց նոր ըեփօրմների մէջ: Կեանքը ապականող այդ հին ըեժիմային մնացորդների դէմ առաջին մաքառողը միայն ինտելիգինցիան էր: Ժողովրդի մէջ նրա քարոզը դեռ թոյլ արձագանք էր գտնում: «Զեմլեվոլցիների», «նարոդովոլցիների» ջանքերը այնուամենայնիւ ահագին դեր կատարեցին Ռուսաստանի յեղափոխութիւնը նախապատրաստելու գործում: Ռուս մասսայից կտըրուած ինտելիգենցիան մի շարք Ծնիդիլսատական» փորձերով ստիպեց բիւրոկրատիայի խոհեմ ներկայացուցիչներին կանգ առնել Լոռիս-Մելիքեան «սահմանադրութեան» վրայ: Մինչ ինքնակալը տատանւումէր վերջնականապէս ընդունելու այդ սահմանադրութիւնը, վրայ հասաւ 1881 թ-ի մարտի 1 ը: Այսուհետև Ալեքսանդր Երրորդը, գահ բարձրանալով, մի կողմ նետեց զիջումների քաղաքականութիւնը և սկսեց «արմատախիլ անել երկրից կրամոլան»: Այդ ըեժիմի աջողութիւնը ցոյց էր տալիս որ հասարակական ընդիմագիր էներգիան բաւականաշափ ուժեղ արտայայտութիւն չունի հասարակական կազմութեան ստրուկտուրայի մէջ, մանր-առևետրական դասակարգը, գիւղացիութիւնը և բանուորականութիւնը անպատրաստ էին ու անդիտակից, ուստի և անմաս սահմանադրական ազատութիւններ պահանջելու գործում:

Նոր ինքնակալի նշանաբանն եղաւ. «Ռուսաստանը պրա-

ուլաւ, ազնուական ոռուների համար։ Հասկանալի է թէ այդ քաղաքականութիւնը ինչպէս պէտք է վերաբերուէր դէպի ոչ-ազնուականը, ոչ-պրաւուլաւը և դէպի ոչ-ոռուաւը։ Մի շաբթ նոր առանձնաշնորհումներով նա աշխատեց պահպանել ընկնող ազնուականութեան դիրքը։ Դիւղացին դարձեալ յանձնուեց ազնուականների (զեմսկի նաշանիկ) կատարեալ խնամակալութեան։ Բնական է որ «ժամանակաւորապէս-պարտաւորուած» գիւղացիների դրութիւնն էլ չպէտքէ փոփոխուէր Անդրկովկասում, և թուրքու վրացի ազնուականները պէտքէ աւելի սիրելի դառնային ինքնակարութեան գործիք բիւրուկրատիայի աչքում, քան ազնուական տարբերից համարեա զուրկ հայ ժողովուրդը որի կուլտուրական-ազգային առաջադիմութիւնը կովկասում աչքի ընկնող երեսոյթ էր։ Այդ բեժիմը իր սեփական ոռու ժողովրդի կրթութիւնն էլ էր սահմանափակում։ Համալսարանի, միջնակարք ուսումնարանների մուտքը դժուարացնուում էր ոչ-ազնուական չքաւորների համար։ Դպրոցը, գիտութիւնը և գրականութիւնը, ինչպէս և հպատակների կեանքն ու պատիւը յանձնուած էին առաջադիմութիւն ճնշող բիւրուկրատիայի անսահման քմահանույթին։ Բայց ազնուականութիւնից առանձին հովանաւորութիւն էր ցոյց տրումնաև Շայրենի արդիւնագործութեան և առևտուրի արուեստական գերաճման։ Մի բան, որ միւս պայմաների հետ միասին, արագացնում էր մասսայի չքաւորումը և աւելի կատարեալ դարձնում թշուառութեան և փարթամութեան հակապատկերները։ Բոնած ընթացքի շնորհիւ օրէցօր բազմանումէր բանուորականութիւնը, աղքատանում գիւղացիութիւնը ու մասր բուրժուազիան, սաստկանում ինտելիգենտ տարբերի դժգոհութիւնը տիրող բռնութիւնից։

Ալեքսանդր III-րդի մահից յետոյ շարունակուեց նրա քաղաքականութիւնը միայն աւելի անսխստեամ և տատանուող եղանակով։ Բայց հասարակութեան խաւերի ոյժերի մէջ արդէն մեծ փոփոխութիւններ էին կատարուել։ Այդ ի հարկէ չէր նկատում կարճատես բիւրուկրատիան, որ շարունակում էր իր երկաթէ բուռնցքներում սեղմել ժողովրդի հասունութիւնը։ Կոլոսս ինքնակալութիւնը կանգնած էր անխորտակելի համարուած զինուորական ոյժի պատուանդանի վրայ, և կիշնեկ ու Գոմէլի հրէական ջարդերը կազմակերպող, ինչպէս և Ֆինլանդեայի իրաւունքները ոչնչացնող Ֆոն

¹⁾ Արտաքին քաղաքականութեան մէջ այդ ուղղութիւնը արտայատուել էր, և միջի այլոց, Լոբանովի նշանաւոր խօսքերով. «Մեզ հարկաւոր է հայաստանը առանց հայերի»։

Պլեվէն հաւատացած էր թէ իրան կ'աջողուի կանգնեցնել իրերի բնական ընթացքը և գլուխ բերել մինչև վերջ պոլիցիական-ժանդարմական դաժան կառավարումը ամենածայրայեղ հետևողականութեամբ։ Սակայն հասարակական ոյժերը արդէն այնքան մեծ էներգիա էին ամբարել որ բաւական էր մի խոշոր սխալ քայլ կառավարութեան կողմից՝ որ բանկուի բացարձակ շարժումը Այդ սխալը ուռւա-ճապնական պատերազմն էր, որ թուլացրեց ինքնակալութեան զինուորակուն և ֆինանսական ոյժերը։

Զայնից և իրաւունքներից զուրկ ժողովրդի արին քրտինքով վաստակած միլիոնները ուուս բիւրոկատները, միացած կամարիլիայի հետ, վաղուց է որ վատնում էին իրանց անձնական շահերի համաձայն։ Այդպիսի ոճագործ «գեշեֆտներից» մէկն էր և «Եալուի կոնցեսսիան» Կորէայում։ Բեղորդազով և ընկ-եան աջողուեց պետական գանձարանից ոչ միայն տասնեակ միլիոններ վատնել իր շահադիտական ձեռնարկութիւնների վրայ, այլև քաղաքական ընդհարում առաջ բերել ձապոնիայի և Ռուսաստանի մէջ։ Եւ փոքր ձապոնիան շատ շուտով ցոյց տուաւ ուզմական ուժով գոռոզ ուուս ինքնակալութեան բոլոր փրուածութիւնն ու ապիկարութիւնը նոյնիսկ պատերազմական ասպարիզում։ Ձապոնական հարուածներից սկսեց սասանուել ինքնակալութեան պատուանդանը և ազատ գլուխ բարձրացրեց ժողովրդի ճնշուած ապստամբ ոգին։ Այնուհետև Ֆրն-Պլեվէն էր բոլոր գուռզութեամբ մի սին անուն, մի ֆիկցիա էր, որ չքացաւ յեղափոխականի նետած ոռումքով (Հոկ. 15, 1904)։ Բիւրոկրատիան հասկացաւ որ հասել են իր վերջին օրերը և զրութիւնը լուրջ է։ Պէտքէր զիջումներ անել։ Եւ այդ զիջումները անւում էին ամբողջ մի տարի՝ «իւրաքանչիւր ժամից յետոյ մի սեղանի գդալը դեղատուսայն իմաստութեամբ...։ Այդ ժամ զիջումներից առաջինն էր ներքին գործոց նոր մինիստր Սվեատապոլկ-Միրսկու նշանակումը, իր հոչակաւոր «վստահութեան» կոչով՝ ուղած հասարակութեան։

Փչեց «գարնանային տրամադրութեան» թեթև զեփիւուր, որ իսկապէս գալիք փոթորկի միայն կարապետն էր։ Մամուլն ու հասարակութիւնը, ազատուած պլեվէեան մղձաւանջից, սկըսեց մի քիչ ազատ շունչ քաշել։ Կենդանացաւ մեռած համարուած Ղազարոսը ուուս ժողովուրդը, որ այլևս չուզեց մնալ այն գերեզմանում, ուր կոխել էր նրան ինքնակալութիւնը։

Անցեալ հոկտեմբեր ամսում էր, երբ զեմստվային և քաղաքային գործիչների, ինտելիգենտ զանազան շրջանների, գիտական ընկերութիւնների ժողովներ ու բանկետներ էին տեղի ունենում և քաղաքական հաւատամբներ ձեակերպւում։ Բոլորից

լուսում էր նոյն երգը. «առանց խիստ օրինակարգի, անձի, խօսքի, համազումաբների և սիութիւներ կազմելու ազատութեան, առանց հասարակութեան մասնակցութեան երկրի օրէնսդրութեան մէջ, առանց հարարակական կոնտրոլի աղմինխտրացիայի վրայ անկարող է Ռուսաստանը զարգանալ և բարօրութեան համար»:—Մի երգ, որ զանագան ձևերով արտայայտում էին ռուս ինտելիգենտ խաւերը, սկսած զեւ Փրանսիական մեծ յեղափոխութեան օրից, բայց մի տեսչանք որ մնում էր առանց իրագործման ամբողջ դար, որովհետև հասարակական կազմութեան մէջ չկար ոյժ՝ կեանքի մէջ մտցնելու իրաւունքը: Այժմ հանգամանքները փոխուել էին. լուսավայրակինը մի շարք խայտառակ պարտութիւններից յետոյ տեսել էր և Հաօեանի ճակատամարտը: Պորտ-Արտուրը ընկնելու վրայ էր: Չնայած այդ յուսահատ դրութեան, ռուս բիւրոկրատիան դեռ լաւատես էր իր ապագայ գերիշխանութեան նկատմամբ և չէր ուզում լսել ոչինչ «պետական կազմը» և «անսասան հիմնական օրէնքները» փոփոխելու մասին: Դեկտեմբերի 12-ին հարարակուած Ուկազով պէտք է միայն մի քանի «բարելաւումներ» մտցնուէին պետական կարգի մէջ: Մինխտրների կոմիտեաը պէտք է մրգէր իր բիւրոկրատիական ապիկար ուղեղը՝ «բարելաւումների» ծրագրներ մշակելու գործում: Բայց հասակութիւնը արդէն ոյժ էր զգում իր մէջ և հասկանում էր այդ ձգձգելու քաղաքականութիւնը... Ընկաւ և Պորտ-Արտուրը (դեկտ. 20). յեղափոխական յուզումը ներքին կեանքում օրէցօր սաստիանում էր. ուսանողական, բանուորական խոռվութիւնները ալեկոծուած ազգաբնակութեան հոծ մասսաների վերևի փրփուրներն էին միայն. և իրօք, չկար հասարակութեան մէջ մի նշանաւոր շերտ, որ ցանկար ապրել հին բեժիմի տակ:

Ճիշդ է, քահանայ Գապոնի առաջնորդութեամբ յունուարի 9-ին Ցարի մօտ գնացող բանուորների հսկայական ամբոխը ցրուեց Պետերբուրգի փողոցներում զօրքի գնդակներով և սրերով, բայց այդ արիւնանեղ անցքը միայն փարատեց Ցարի հմայքը ռուս գոեհիկ ժողովրդի աջում, աւելի ոյժ տուաւ յեղափոխութեան ալիքներին: Այսուեհետև բանուորական գործադրումները ահազին ծաւալ ստացան Ռուսաստանի բոլոր արդիւնաբերական կենտրոններում. տնտեսական պահանջների հետ բանուորները արդէն շեշտում էին քաղաքական ազատութիւնների պահանջների վրայ:

Այս բոլոր շարժումները բնականաբար արձագանք էին գանում և կովկասում, ուր Գոլիցինի և Վելչկոի գործունէութիւնից յետոյ ռուս բիւրոկրատիայի և ռուս ամբոխի մէջ բուն էր

դրել այն կարծիքը թէ այդտեղ «հարստահարիչ» հայն է բոլոր, հակապետական շարժումների պատճառը, հայն է ինքնակալ ըեժիմի համար ամենավտանգաւոր տարրը: Այդ մեղադրանքների մէջ ճիշտն այն էր միայն՝ որ հայ տարրը ոչ մի շահ չունէր պաշտպանելու հին ըեժիմը, որ հնարաւոր էր դարձնում Դոնդուկով Գոլիցինի նման սատրապների վայրագործն անարդար կառավարութիւն: Եւ ահա ինչու:

Հայ ժողովուրդը բաղկացած է գիւղացիութիւնից, բանուրականութիւնից, մանր-բուրժուազիայից և ինտելիգենցիայից: Սակաւաթիւ խոշոր բուրժուաների և ազնուականութեան գերը մեծ չէր մեր կեանքում և դրանց համար ոչ մի արժէք չունէր ազգային-պրոգրեսիւ քաղաքականութիւնը: Չնչին էր մեզանում և ժողովրդից կախում ունեցող հոգեորականութեան գերը: Հազիւ մի տասնեակ բարձր կղերի և ժողովրդի խաւե ըի հետ իր շահերով կապուած քահանաների մէջ աւելի շոււս անտազնիզմ կարելի էր գտնել, քան դասակարգային ընդհանուր կապեր: Յամենայն դէպս, կղերի և խուշոր բուրժուազիայի գերը պասսիւ էր: Հայ գիւղացիութիւնն ու բանուրականութիւնն էլ մի առանձին զարթնած գիտակցութիւն չէին ցոյց տալիս, մինչև որ գպրոցների և կալուածների գլուխումը չցնցեց դրանց: Հայ իրականութեան մէջ դործօն գեր էր կատարում իսկապէս միջին դասակարգը—մանր բուրժուազիան իր ինտելիգենտ և կիսախնտելիգենտ տարրերով. մեր կեանքին տոն տուղը այդ խաւնէր, իսկ հայ ժողորդի այդ հասարակական կազմութեան աւելի էին համապատասխանում ազգային-դեմոկրատիական կարգերը: Հետեաբար սահմանադրական Ռուսաստանը հայութեան նպաստաւոր կարող էր լինել, իսկ բիւրոկրատիա կան-ազնուապիտական ինքնակալութիւնը՝ հայի զարգացման խոչնդուտ:

Դրան աւելացրէք և այն որ թիւրքահայերի ողբալի դրութիւնը վերջին քառորդ դարում առաջ բերաւ յեղափոխական մի հոսանք, որի տարրերը, երբ ստիպուած եղան խառնուել նաև ռուսահայերի գործերում, ընականաբար մացրին մաքառման մէջ իրանց տակտիկան: Այդպիսով հայ ժողովրդի գործօն շերտերը դառան դեմոկրատիական-յեղափոխական: Թէ ի՞նչ դգացմունքներ պէտք է տածէր ոռուս բիւրոկրատիան դէպի այդպիսի ժողովուրդ—պարզ է... Իսկ մեր հարեւաների:

Թուրք և վրացի ժողովուրդների մէջ տիրապետող, ազդեցիկ, գործօն տարրը ազնուականութիւնն էր, այն զանազանութեամբ սակայն որ վրաց ժողովրդի բանուրական և գիւղացիական տարրը արդէն գիտակցութեան էր հասել և իր ա-

ունանձին իդէալներն ունէր, իսկ թուրք տգէտ ժողովուրդը հլու հպատակ էր իր ըէգերի և մոլլաների ձեռքում: Ուրեմն, վրաց ազնուականները և թիւրքութիւնը ամբողջապէս պէտք է կողմանակից լինէին հին ըեծիսին: Այդպիսով ուս շինովնիկութիւնը, վրաց ազնուականութիւնը և թրբութիւնը ընական զինակիցներ էին և պէտք է կուռէին մի դրօշակի տակ: Դրանց թէկ հոգով հարազատ էին հայ խոշոր բուրժուաները և բարձր հոգեւորականութիւնը, սակայն հակառակ կողմի նախանձը և շինովնիկների թիւր հասկացողութիւնը մերոնց quasi-«ազգային» սեպարատիստական ուղղութեան» մասին, անջատում էր առաջացրել: Ուստի երբ յեղափոխութեան ալիքները հասան նաև կովկասին՝ հակայեղափոխական շարժումը պէտք է իր զայրոյթը թափէր «ամենավլտանգաւոր» և ատուած տարրի՝ այն է-հայի վրայ:

Հին ըեժիմը իր կողմանակիցներով իր զայրոյթը «հակապետական» տարրերի դէմ ներքին նահանգներում հանում էր «անհանգիստ» հրէաներից և ինտելիգենտներից: Կովկասում փրկութեան նոխազը պէտք է լինէր արտաքին զօրեղ պաշտպաններ չունեցող հայ տարրը, որի գլխին էքսպերիմենտներ առես միջի անում... Եւ ահա հայաջնջման սպառնալիքներով կովկասից հեռացած Գոլլցինի միջնորդութեամբ Բագու է նշանակում վրացի իշխան Նակաշիձէն: Հէնց այդ քաղաքից պէտք էր սկսել առաջին գործողութիւնը. չէ որ հայերի տնտեսական ոյժը, ինտելիգենցիայի ստուար մասը և գործադուլներ սարքող բանուորականութիւնը այդտեղ էին աչքի ընկնում. միւս կողմից Բագուն է, ուր բուն է դրել թուրք «ինտելիգենցիան», որ չէր ծածկում իր համիլսամական տենդենցները (այդ չէր կարող չիմանալ ուս բիւրոկրատիան, որի ցենզուրայից էին անցնում Բասպին-ի յօդուածները): Բագուում էին հարուստ հաջիները և աւագակ դոչիները, որոնք հնարաւորութիւն ունէին ոյժ դուրս բերել հայերի դէմ կուռելու համար: Ժամանակը, տեղը, թուրք հայկական յարաբերութիւնների լարուածութիւնը՝ Աղաեվ-Թոփչիբաշեֆսերի պրոպագանդի և հայ «կոմիտետներ» ներկայութեան պատճառով—այդ բոլորը չափազանց նպաստաւոր էին հայկական ջարդերի աջող սկզբանաւորութեան համար: Իսկ հայը համ էին ըեժիմի դէմ պայքար էր մղում համ, էլ միամտարար հաւատացած էր որ այդ ըեժիմը թոյլ չի տալ իրան՝ հայից վըրէժ հանել թուրքի ձեռքով. նա կարծում էր որ ակներև ճշմարտութիւն պէտքէ լինի ուստի բիւրոկրատիայի աջքում այն թէ արեւելքում ուի բարեկամն հայն է և թշնամին՝ թուրքը. միամիտ պոլիտիկա, որ բոլորովին անտես էր առնում Լոբանովի ժամանակից փոխուած քաղաքականութիւնը հայերի նկատմամբ:

Եւ այդպիսի տհաս աշխարհայեացքից կարողացան օգտուել հայութեան թշնամիները:

Հին բեժիմը կովկասում էլ սկսեց ջարդեր, իսկ խուլիդանութեան պատրաստի տարր էր ճանաչուած բէգերի քմահաճոյքից կախուած, աւազակութեան, սպանութեան, հրկիղութեան և թալանի վարժ թուրք ամբոխը: Այդպիսով բարբարոս թուրքը դառնուած էր հին բեժիմի զինակից՝ յեղափոխական շարժման դէմ: Այդ ջարդերը համ թուլացրին ուժեղ հայութիւնը տնտեսապէս, համ էլ զբաղեցրին հայերի գործօն ոյժերը...

Սակայն ևս հարիւրեակներին տարածած ահաբեկումը բովանդակ Խուսաստանում չօգնեց գործին և ինքնակալութիւնը ստիպուած էր նոր զիջում անել. փեարուարի 18-ին հաստատուեց բուլիգինեան կոմիսիան, որ պէտք իրեւ թէ գոհացում տար պրոգրեսսիւ տարրերի պահանջներին և ինչ-որ ներկայացուցչական ժողովի նախագիծ մշակէր: Միաժամանակ մինստրների կոմիտետին իրաւունք տրուեղաւ ընդունել հասարակութեան կողմից ամեն տեսակ լարձիքներ՝ ռպեսական վերանորոգութիւնը կատարելագործելու մասին: Այդ իրաւունքից օգտուեց հասարակութիւնը. ամեն տեղ կազմուեցան ժողովներ, մշակուեցան պահանջներ և այլն:

Հասարակական բոլոր խաւերի, պետութեան բոլոր ազգերի ցանկութիւների մէջ շեշտուում էր սահմանադրական ազատութիւների մասին, որ նոյն էր թէ ինքնակալութեան վերացումը: Բիւրոկրատիան, միացած յետադէմ մամուլի, պրաւուլաւ հոգեորականութեան ահազին մեծամասնութեան և խուլիգան տարրերի հետ, «հայրենքի թշնամիներ» անուանեց այն բոլորին, որոնք սահմանադրական երաշխաւորութիւններ էին պահանջում: Կառավարութիւնը դեռ յոյս ունէր կիսատ-պուատ զիջութիւնով հանգստացնել գէթ չափաւոր տարրերը, և ահա ապրիլի 17-ին յոյս է տեսնուած խղճի ազատութեան մասին ուկազը, մայիսի 1-ին վերացւում են լեհական ազգաբնակութեան նկատմամբ գործադրուող մի քանի սահմանափակութիւններ (հողեր գնելու, լեզուի, դպրոցների սասին): Կովկասն էլ չեն մոռանուած. Գոլիցինի փոխարէն նշանակում է կոմս Վորոնցով-Դաշկովը, որ բացարձակօրէն յայտնուած է թէ ինքը նոր ուղղութեան պէտք է հետևի «իր համար թանգագին Կովկասում» ղեկավարուելով ազգաբնակութեան ներկայացուցիչների կարծիքներով: Նա խոստանուած էր (դեռ Պետերբուրգից) վերացնել և բարեյանող լուծուած տալ եկեղեցական-դպրոցական հարցերին: Եկաւ Կովկաս, օգնական ընտրեց Կրըմ Գիրէին, որ Գոլիցինի ըեժիմի մարդ էր և չափազանց թրքամէր, իրան չրջապատեց թուրք և վրա-

ցի ազնուականութեամբ։ Պոլիցիան և աղմինիոտրացիան մնաց հինք։ Թուրքը դարձեալ համարւում էր հին ըեժիմի նեցուկ—պատժել, խիստ միջոցներ ծեռք առնել թուրք աւազակների և մարդասպանների դէմ խելացի չէր համարւում։ Բնականաբար շարունակուեցան թրքական վայրագութիւնները։

Վրայ հասան Մուկդենի և Ցուշիսի պարտութիւնները, ուուսաց բանակն և նաւասարմիլը իսպառ ջախճախուած էին։ Այլա դժուար էր յոյս դնել ինքնակալութեան այդ քայբառած փառագուրկ սինների վրայ։ Խփել էր պատմութեան հատուցման ժամը, պէտքէ կորչէր կեսնքից ոճիրներով ծանրաբեռնուած հին ըեժիմը։ Եւ օրհասական վերջին ճիգն թափեց արիւնից դեռ չկշտացած բիւրոկրատեան։ Տրեպովին աըրուուեցան անսահման լիազօրութիւններ՝ ըստ իր հայցողութեան զանազան համաժողովներ, նոյն իսկ կառարավարութիւնից հաստառուած ընկերութիւններ փակել, ձերբակալութիւններ անել եւալն, եւայլ։ Բայց արդէն ուշ էր դիկտատուրայի դիմելու. այժմ այդ բոլոր միջոցները այն ազդեցութիւնը պէտքէ անէին, ինչ փայտի հարուածները ծովի կատաղած ալիքները զպազելով գործում։ Ապստամբական ոգին արդէն տարածուել էր և զօրքի ու նաւասարինների մէջ։ Սկզովում «Պոտեմկին» զրահակերը մի քանի նաւերով բարձրացել էր կարմիր դրօշակ և ոմբակոնծում էր ինքնակալ Ռուսաստանի քաղաքները։ Դրութիւնը սպառնալից էր, չէր կարելի չզիջել։ Եւ յունիսի 6-ին Պետերուրգում ծարը ընդունեց զեմատվային և քաղաքային գործիչների ներկայացուցիչներին, լսեց իշխ։ Տրուեցկօյի նշանաւոր ճառը, խօսք տուաւ «պետական աշխատանքի համար հրաւիրել ընտրուած մարդկանց»։ Մի ամիս անց, օգոստոսի 6-ին, հաստատուեց Պետական Դուման, առանց խօսքի, ժողովների և անձի ազատութեան, առանց օրէնսդրական ինիցիատիւի։ Լեառը մուկ ծնեց. դա պարլամենտարիզմի բիւրոկրատիական վիժմունք էր և, հետևաբար, չէր կարող գորհացնել սահմանադրական ազատութիւններ պահանջողներին։ Կոիւը շարունակուեց. դարձեալ ցոյցեր, տերրորիստական գործողութիւններ, խոռվութիւնոր։ Վերջապէս Մոսկուայում հոկտեմբերի 14-ից սկսուեց յեղափոխութեան նոր, աւելիուժեղ դէնքի գործադրութիւնը—քաղաքական ընդհանուր գործադրուլ, որ տարածուեց ամբողջ Ռուսաստանում։ Հաշտեցնել երկու կռուող մասերը՝ ինքնակալութիւնը և յեղափոխութիւնը՝ յանձն առաւկոմ Վիտտէն, որին աջողուել էր Պորտամուտում կնքել ուուճապոնական խաղաղութիւնը։ Եւ ահա այ դիպլոմատի՝ խորհըր-

դով հրատարակուեց հոկտեմբերի 17-ի մանիքեստը, որով սկսեցինք մեր այս տեսութիւնը:

Դա Ռուսական Մեծ Յեղափոխութեան առաջին մեծ յաղթանակն էր, այնքմն տարիների զոհաբերութիւններից և տիտանական ջանքերից յետոյ: Ամբողջ Ռուսաստանը հսկայ ովկեանոսի նման ազատութեան այդ կարմիր օրերում ծփում էր ուրախ և շաչում շառաչում յաղթական, վեհ երգերից, ճառերից և կոչերից: Ժողովրդի ուրախութիւնը սուգ էր հին, զառամեալ կարգերի պարագիտների համար, և նրանք նենդ դաւադրութեամբ վրայ տուին իրանց սև հարիւրեակներով կարմիր դրշակակիրների վրայ, գնդակի տարափ չմնայեցին իրանց ատելութիւնն ու վրէժն անմեղներից լուծելու համար: Այն զօրքերը, որոնք ապուշ կտրած նայում էին թուրք աւազակների և մարդասպանների քստմնելի բարբարոսութիւնների վրայ և չէին համարձակում գնդակահար անել հրկիղող, թալանող, բռնաբարող, սրբապղծող մարդասպանների զոհակները, յայտնելով թէ «հրամայուած չե»—այժմ գնդակներ էին տեղում փողոցում տօնական տրամադրութիւնով խռնուած ժողովրդի վրայ: Այդ է հին բեժիմի լոգիկան: աւազակը, մարդասպանը, հրկիղողը վնասակար չեն, այլ վնասակար են բիւրուկրատիայի դէմ «կորչի» աղաղակողները: Եւ մանիքեստը սրբակուեց անմեղ երեխանների և կանանց արիւնով և ջարդուած գլուխներից ցրիւ եկած ուղեղի կտորներով: Խնտիլգինցիան, հրէան, հայը արժանացան Տըեպովեան սև հարիւրեակների զաղանային բարբարոսութիւններին: Այդպիսի մարտիրոսութիւններով բացուեց նոր կեանքի արշալոյսը:

Վիտտէի բռնած տարտամ, տատանուող դիրքը հէնց սկզբից փչացրեց նոր գործը: Նա հեռատեսութիւն չունեցաւ ժնոր կառավարութեան» գլուխ կամսգնեցնել նոր ուղղութեան մարդկանց, որոնց թիւը այնքմն շատ է Ռուսաստանում: Նա թոյլ տուեց որ «նոր կառավարութեան» հետ զուգընթացարար գործեն Տըեպովեան և Պոբեդոնոսցեմներ իրանց բազմաթիւ մութ գործականներով: Նա իսկոյն և եթ չհրատարակեց բոլոր բաղաքական յանցաւորներին ներուա: Նա գիւղացիութեան հողի պահանջը անտես էր արեւ: Եւ Տըեպովի ծրագրով Ռուսաստանի բոլոր անկիւններում «հայրենասէրների» սարբած ջարդերը ինչպէս և Լեհաստանում իսկոյն և եթ յայտարարուած զինուորական դրութիւնը՝ վարկագուրկ դարձրին Վիտտէի կառավարութիւնը: Հաւատ չկար դէպի այն սահմանաղբութիւնը, որ պէտք է մշակէր այդպիսի կառավարութիւնից հրաւիրուած Պետական

Դուման իր նեղ դասակարգային ընտրողական իրաւունքներով։ Եւ յեղափոխութիւնը շարունակուեց Ռուսաստանում։ պահանջում էր Սահմանադիր ժողովի հրամակում՝ ընդհանուր, հաւասար, ուղիղ և գաղտնի ընտրողութեամբ։ պահանջում էր բոլոր քաղաքական յանցաւրներին ներում, հողի ազգայնացում, հին բեժիմի ներկայացուցիչների հեռացում պաշտօններից, ջարդերի հեղինակների խիստ պատիժ, Լեհաստանի համար ինքնավարութիւն։ Եւ քանի ուշ էր տրում զիջումը ու թերի—այնքան ծայրայեղ էին դանում պահանջները։ Բիւրոկրատիան չէր ուղում այդ հասկանալ։ Նոր զիջումներ հրատարակուեցան։ ոչ բոլոր քաղաքական յանցաւրներին ազատելու մասին, գիւղացիների յետ դնան վճարների թեթևացման և հողաբաժինների ընդարձակման մասին։ Տրեպով, Պոպեղոնոսցեկ և Գլազով հեռացրուեցան իրանց պաշտօններից, այլ պաշտօններ ստանալով և մերձենալով պալատին։ Մի քանի ժամանակից յետոյ վերացրուեց և արտակարդ կարգադրութիւնը Լեհաստանի մասին։ Բայց փոխարէնը նոր անտակութիւններ գիւղացիական շարժումներով բռնուած նահանգները նորիցուղարկում են արտակարդ լիազօրութիւններով գեներալ-ադիւտանտներ, որոնք իրանց խժդուութիւններով տերրորիստական ընդդիմադրութիւն են յարուցանում իրանց դէմ (գեներալ Սախարովին սպանում է մի կին)։ Բոլոր ազատ քաղաքացիներին յատկացրուած ամիութիւն կազմելու իրաւունքից զրկում են պոստ-հեռագրական պաշտօնեանները։ առաջ է գալիս պոստ-հեռագրական գործադրու ամրող Ռուսաստանում իր զարհուրելի հետևանքներով։ Բանտարկում են «Գիւղացիական միութեան» պարագլուխները։ Բազմամիլիոն զօրքի և նաւատորմի հնացած կարգ-կանոնի մէջ ոչ մի փոփոխութիւն չի կատարում, և զինուորներն ու նաւատիները յուղում են, պահանջներ անում, ապստամբուում։ Կրոնշտատից սկսած մինչև Սկաստոպոլ, Վլադիկուստոկից մինչև Վարշաւ գորքը պառակտում է Վլադիպարական և Շնակակառավառական մասերի։ տեղի են ունենում ճակատամարտեր թէ ցամքի և թէ ծովի վրայ։ հետևանքը հազարաւոր սպանուածներ, գերի ընկածներ, մի քանի խորտակուած ու զմանաւեր, քարուքանդ արուած շինուութիւններ։ Ալդպիսով դասալըութեան ու անիշխանութեան պատկերը սարսարեր մուայլութեան է հանում, բայց և այնպէս անիծուած էին բեժիմի բուերն, բորենիներն և վագրները չեն ուզում ձեռք վերցնել դժբախտ երկրից։ Սընանկութեան և քայքայման դուռն է հասել ժողովուրդն էլ, պետութիւնն էլ, բայց և այնպէս արմատական զիջումներ անելու փոխարէն դեռ սպառնում են զինուորական դիկտատուրա հաս-

տատել և արեան մէջ խեղդել այդքան երկունքների մէջ ծնուած մասուկ ազատութիւնը։ Պարագիտ բիւրոկրատիան չի կարողանում հասկանալ որ պետութեան նպատակը իրանց նը- ման ոճրագործների պահպանութեան մէջ չէ, այլ նրա նպա- տակն է՝ բոլոր քաղաքացիների բարօրութեան և ազատութեան ապահովութիւնը։ Նրանք պէտք է իմանային որ մինչև չապա- հովուի մի երկրում ազգաբնակութեան լայն սահմանադրական զարգացումը՝ անկարելի է սպասել արմատական հոսանքների կանոնաւոր և խաղաղ ընթացքը։ Մինչև Ռուսաստանում կառա- րուող բուրժուական-գեմոկրատիական յեղափոխութիւնը Սահ- մանադրի ժողովի միջոցով լայն հուն չքանայ իր առջե, նո չի ձեռք վերցնել կատաղած հեղեղինան իր աւերիչ ընթացքից։ Բիւ- րոկրատիայի կառուցած ամբարդակներն ու թմբերը, ժամա- նակաւոր արգելքներ դնելով, միմիայն աւելի անզուսպ, աւելի կործանիչ են դարձնում յեղափոխական էներգիան։ Որքան շուտ հրաւիրուի Սահմանադրի ժողով՝ այնքան հեշտ կը լինի վեր- ջացնել յեղափոխութիւնը և սկսել նոր կեանքի ստեղծագործա- կան աշխատանքը։ Ռուսաստանը ցեղերի, կրօնների, կուլտուր- ների և աշխարհագրական պայմանների չափազանց բարդ պետ- պեսունակ և խճճուած մի զանգուած է, ուսաի բիւրոկրատիա- կան հանճարից վեր է, առանց ազգաբնակութիւնան կամքն իմա- նալու, առանց նրա կատարեալ ներկայացուցչութեան մշակել այնպիսի Սահմանադրութիւն, որ զերծ լինէր բիւրոկրատիա- կան շաբըն ֆորմուլներից, նեղ կուսակցական անհամբերողու- թիւնից, անշարժութեան ընկեր դոգմատիզմից և իրականու- թեան հոտառութիւնից զուրկ դոկտրինեօրութիւնից։ Միթէ պարզ չէ հարցը։ Դառնանք մեր երկրին։

Տասը ամսուայ ընթացքում կառավարութիւնից խրախու- սուած թուրքական խժդժութիւնները Բագուի, Գանձակի և Երե- ւանի նահանգների քաղաքներում և գիւղերում հայ ազգա- բնակութեան դէմ այնքան անպատիժ մնացին որ վստահացան մուտք գործել նաև փոխարքայանիստ թիֆլիսը և չյնգիլխա- նեան վայրագութիւնների ներկայացումներ սարքել Մէջդանում, ուստ բիւրոկրատիայի, դինուրութեան և վրաց հայակեր շովի- նիստների աչքերի առջև։ Սակայն Կովկասի մայրաքաղաքում հայ և միջազգային կազմակերպութիւնները մտադիր չէին թոյլ տալու որ Մէջդանը հոռվմէական կրկէս դառնայ, իսկ բիւրո- կրատիան, օֆիցերները և վրացի շովինիստները կրկէսի հան- դիսատեաները, այդ կրկէսի կատաղած վագրների և բորենինե- րի դերը պէտք է ստանձնէին թուրք մարդասպաններից կազմ-

ուած վոհմակները իրանց բէգերի առաջնորդութեամբ, բայց գրանց առջև ցցուեցին ոսից գլուխ զինուած հայ կտրիճներ, այլ ոչ Հռոմի կրկէսների քրիստոնեաներ, որոնք, յոյսները դրած Նախախնամութեան վրայ, աղօթքներ էին մրմիջում այն ժամանակ, երբ գազանները յօշոտում են նըրանց մարմինը և լիզում իրանց արիւնոտ դունչերը... Եւ հանդիսատեսները վերջապէս կարմրեցին ամօթից, նրանց մեռած խիղճը շարժուեց և ստիպուած եղան իրանք ևս միջոցներ ձեռք առնել և յետ քշել իրանց որշերից դուրս եկած արիւնածարաւ բէգերին իրանց ընչաքաղց նոքարների հետ դէպի Բորչալուի ծմակները: Ամօթ և նզովք այն քաղաքականութեան որ երես է տալիս խուլիգանական ամեն տեսակ արտայտութիւններին! Դրա վերջը այն է, ինչ որ տեսնում ենք...

Այժմ ամենայետին հայն էլ հասկացաւ, որ բռնակալական ըեժիմը ժողովրդի համար աւելի մեծ չարիք է, քան ամենաուժեղ երկրաշարժը և ամենաահուելի ժանտախտը, լինի այդ բռնակալութիւնը խաչակիր, թէ մահիկաւոր դրօշակի տակ: Թշուառ հայութիւնը Մեծն Պետրոսի ժամանակներից սկսած զոհում էր ամեն ինչ, միայն թէ դայ և հաստատուի իր ապրած երկրում քրիստոնեաների պաշտպան հզօր Ռուսաստանը: Եւ երբ իրականացաւ այդ իղձը՝ նրա ցնծութեան վերջ չկար: Այնուհետև անսահման հաւատով որ իր կեանքը, գոյքը և պատիւը ապահովուած են «անսօրէնների» ոտնձգութիւններից, հայը սերնդից սերունդ, մօտ մի դար չարչարում էր, արիւն քրտինք թափում իր բարօրութեան վրայ, շէնացնում քաղաքներ ու գիւղեր, կրթում, ծաղկեցնում առևտուրն ու արդիւնագործութիւնը, հաւատարմութեամբ ծառայում պետութեան, լքցնում նրա գանձարանը իր հալալ աշխատանքից հանած տուրքերով, իր զաւակների արիւնն էր զոհում ընդհանուր հայրենիքի համար, իր հլու հնագանդութեան մէջ բողոքում էր միայն վարչութեան ամենածարայեղ անարդարութեան դէպերում: Նրա հաւատը դէպի իշխանութիւնը այնքան կոյր էր որ նա նոյնիսկ մոռացաւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը, որովհետև մի բոպէ անգամ չէր կասկածում թէ իշխանութիւնը, զօրքը, ոստիկանութիւնը և արդարադատութիւնը գոյութիւն ունին բոլոր բնակիչների կեանքի, գոյքի և պատուի պաշտպանութեան համար. նրա մտքովն չէր անցնում մասսային սպանութիւնների, թալանի և այլ ոճագործութիւնների հնարաւորութիւնն անգամ: Բայց ահա փետրուար ամսից մինչև օրս Կովկասի բոլոր հայարնակ քաղաքներում և գիւղերում, ոռւս իշխանութեան բարեհաճ թոյլատութեամբ, օր ցերեկով, զօրքերի աշքերի առջև,

ոռւս պոլիցիայի գիտութեամբ զինուած և կազմակերպուած
թուրք օրդաները, իրանց արիւնարբու բէզերի, խաների և սէ-
յիղների առաջնորդութեամբ, կոտորում են հայերին, թալանուա-
նրանց ունեցածը, այրում նրանց տները, կտրտում ալգիները,
քշում հօտերն և նախիրները, աւերում և յափշտակում գործա-
րանները, բռնաբարում, գերի տանում կանանց, մորթոտում ե-
րեխաներին և ծերերին, բռնի կրօնափոխ անում, պղծում ե-
կեղեցիները, մի խօսքով կատարում այն բոլոր գազանութիւն-
ները, որոնցից մարդու գլխի մաղերն բիզ բիզ ցցուում են և
արիւնը երակների մէջ սառչում է; Եւ ի նչ, Գտնուում են
«աղմինիստրատորներ» որոնք արդարացնում են այդ բոլորը և
դեռ մեղաւոր են համարում տուժող հայերին: Գտնուում են
Ֆաղդէելիներ և Տակայաշվիլիներ, որոնք իրանց մէջ ոյդ են գլու-
նում պատժելու ոչ չարագործներին, այլ օրէնքի և իշխանութեան
պաշտպանութիւնից զրկուած և օրհասական կուում իրան պաշտ-
պանող հային: Հազարաւոր փաստերից մը առաջ բերենք,
միթէ միայն Պոյլի կայարանում պատահած դէպքը, երբ զին-
ուած թուրքեր, որսկան ջների նման, մտան ժամանած զնաց-
քի վագոնները՝ հայ որոնելու և երբ գտան մի անգէն խեղճ պա-
տանի, խլեցին նրան իր լեղապատառ մօր գրկից, դուրս քա-
շեցին պլատֆորմ և ոռւս ժանդարմների, ստրաժնիկների, զի-
նուորոների և օֆիցիերների և ապշած հասարակութեան առջև
մորթեցին թշուաւոին, միմիայն այն պատճառով, որ նա հայ է.
և ոչ մի ձեռք չըարձրաւ կանդնեցնելու այդ քստմնելի չարա-
գործութիւնը! Ո՞չ մի ձեռք!.. «Հրամայուած չէ հրացան արձակել»
—ահա արդարանալու ստերէօտիպնախաղասուդիւնը, որ ամեն
տեղ լսուում է զինուորներից և կազակներից, երբ ինդիրը հայի
պաշտպանութեան է գալիս: Ո՞վէ տուել այդ ոճախնամ հրամանը:
Միթէ արդարադատութիւնը պէտք է կոյր մնայ մինչև վերջ.
միթէ պատասխանատու չեն փոխարքան և իր գործակիցները
և պոլիցիան այդպիսի բարբարու ուղղութիւն ունեցող քա-
ղաքականութեան համար, Մի ամբողջ ժողովուրդ դարձել են
Դրէյֆուս, որին հալածում են բիւրոկրատները. թիւրք խու-
ժանը և վրացի շովինիստները, և այդ ստոր, խաւար դաւադը-
րութեան դէմ կոիւ չէ դուրս գալիս մի Զոլա իր համհարզնե-
րով!.. Բոլոր ստոր և խաւար ուժերը միացած են հայութիւնը
մեղադրելու մէջ. լսելով լսում են և չեն իմանում ճշմարտու-
թիւնը, տեսնելով տեսնում են և չեն ճանաչում չարագործնե-
րին: «Վայ ձեղ կեղծաւորաց. զի նման էք գերեզմանաց բռելոց,
որ արտաքոյ երկին գեղեցիկ և ի ներքոյ լի են ոսկերօք
մեռելոց և ամենայն պղծութեամբ»...

Մեր անցեալ տեսութիւնը (№ 10) գրուած էր հոկտեմբերի 5-ին, երբ դեռ ևս կարմիր թանաքով զինուած ցենզուրան էր իշխում մամուլի վրայ: Դեռ այն ժամանակ, բռնկուած կրքերն հանգատացնելու նպատակով, պահանջում էինք նախ և առաջ՝ «աղատ և արդար կարգեր»: Ցետոյ՝ պահանջում էինք «գումարել հայ-թուրք-վրացական ներկայացուցչութեան ժողով»: Այդ երկրորդ պահանջը երկու ամիս անց դնում են և տեղական թերթերը, այն զանազանութեամբ որ հայոց մի քանի լրագրներն ուղղում են բաւականանալ միայն հայ-թուրքական համագումարով: Մենք պնդում ենք մեր պահանջի վրայ և նոյնիսկ ընդարձակում այն, մտցնելով ներկայացուցչութեան մէջ նաև ուռւ հասարականութիւնից ընտրուածներին: Մենք այդ համագումարին միայն խաղաղաշարական ֆունկցիաներ չենք յատկացնում, այլ ցանկանում ենք որ նա դառնայ հասարակական խիղճն արտայայտող մի ժողովրդական դատարան: Այն ոճիրները որ կատարուել են այս 10 ամիսների ընթացքում իրաւունք է տալիս տաելու որ հայ ազգը հազար անգամ աւելի անարդարութիւն կրեց Կովկասի ըէակցիօն ոյթերի կողմից քան թէ Դրէյֆուսը Ֆրանսիայում: Գլխաւոր յանցաւորը աղմինիստրացիան է, որից կախում ունեն մեր չինովնիկ դատաւորները և քննիչները. այդ պայմաններում երբէք հայ ժողովուրդը արդարադատութիւնը չի գտնիլ: Իսկ անպատիժ թողնել մի ամբողջ ժողովրդի գլխին կատարուած անլուր ոճրագործութիւնները — նշանակում է զուրկ լինել արդարամտութեան նշոյլից անգամ: Եւ մի հասարակութիւն որ իր մէջ չի գտնում հրամայական պահանջ գոչելու ոճրագործների երեսին՝ յասուե-նա արժան չէ մարդկային անունը կրելու... Զանազան Կուլմինակիների և Սեղավանների մրոտած թզթերը զրոյ նշանակութիւն չունին: Հասարակութիւնը ինքը պէտք է ընտրի քննիչներ և դատաւորներ, որովհետև Դալի-Ալիներին հովանաւորող և Արնորդներին պաշտօնից հեռացնող մի աղմինիստրացիա երբէք չի նպաստիլ արդարութեան վերականգնման... Հազարաւոր թշուառացած այրիների և որբերի արտասուաթոր աչքերը, հազարաւոր անմեղ զոհերի արիւնը արդարութիւն են պահանջում, և մինչև չգոհացնուի այդ պահանջը՝ Նեմեզիդան հանգիստ չի թողնի մեր աւերուած, հկկիգուած արիւնաներկ երկիրը...

Թողնենք հեռու ապագան և վեցնենք մեր սերնդի ոյժերին համապատասխան դործերը: Հարցնում ենք, կարմի է հայ ժողովուրդը հանդիսա սրտով նուիրուել իր խաղաղ աշխատանքին, քանի դեռ պաշաճանավարում են օճրագործութիւնների հե- նեկամբերը, 1905.

զինակներն, զրդիչները և հովանաւորողները, քանի դեռ արդար հատուցում չեն ստացել չարագործները ժողովրդական դատարանից, կարմիր է հայը շարունակել բարի հարևանութիւնը մի տարրի հետ, որի գաղանային բնագլները ամեն բողէ պատրաստ են բռնկուել այս կամ այն պրովոկատորի, բէզի կամ մէյիդի քարոզով չամերաշխութեան, եղբայրութեան կոչերը թող շարունակ կըրկնուեն, թող սոցիալիզմի ագիտացիան եռանդով տարածուի և թուրք մասսայի մէջ, սակայն մեր սերունդը այժմ միայն այդ պլատոնական միջոցների վրայ անկարող է յոյս դնել, եթէ չի ուզում Շչեղրինի կարս-ու-պատուի գերում գտնուել: Հայը այժմ այնպիսի պայմաններում է ապրում որ եթէ չի ուզում բնաշնչնել Կովկասում պէտքէ տասը ամսուայ դառն փորձերից դասեր վերցնի: Այդ դասերն ասում են նրան, 1) հին ըթէիմը պէտք է առանց մնացորդի վերանայ և տեղ տայ լայն սահմանադրական—ժողովրդավարական մի կառավարութեան. 2) հայ ժողովուրդը պէտք է ամենալայն չափերով իրազործի ինքնապաշտպանութեան միջոցները. տևագովուի թուրք տարրերով շրջապատուած հատ-հատ հայ գիւղերը հայաբնակ շրջանների մօտ, խառն թուրք-հայկական բնակիչներ ունեցող գիւղերում պէտք է կատարուեն տարրեր տարրերի փոխադրութիւններ, այնպէս որ միացեղ ազգաբնակութիւններ ստացուեն այդ կէտերում. քաղաքներում, ուր հայերը փոքրամասնութիւն են կազմում թուրքերի համեմատութեամբ (Բագու, Գանձակ, Նախճաւան և այլն) և քաղաքային ինքնավարութիւնները, շնորհիւ թուրք տարրի տպէտ և անկուլառու բնագիններին, ընկնում են հասարակական կեանքի անպատրաստ գործիչների ձեռքք, որոնք դանդաղեցրնում են քայլայում են միւս՝ աւելի կուլատուրական՝ տարրերի կեանքը, այդպիսի քաղաքներում թուրքերը պէտքէ ունենան առանձին թաղեր իրանց առանձին ինքնավարութեամբ, եթէ չեն ցանկալ որ յարգուին ոչ թուրք փոքրամասնութեան իրաւունքները: Ընդհանուր ձայնաւութեան արդար սկըրունքը զանազան բէզեր, հաջիներ, սէյիններ ու զոշիներ, օգտուելով թուրք մասսայի տգիտութիւնից, անշուշտ ի չար պէտք է գործ դնեն և դրա շնորհիւ բագուի, Գանձակի, Շուշու, Նախճաւանի, Շամախու, Նուխու և այլ թիւրք-հայ ազգաբնակութիւն ունեցող քաղաքները մատնուած պէտք է լինեն կատարեալ անշարժութեան: Մինչև որ սոցիալ-դեմոկրատիական պրոպագանդը իր գործը տեսնի թրքական խաւերում—անթիւ անհամար չարիքներ կը թափուեն հայերի գլխին և բրիստոնեայ տարրերի հետ տուժողի դերում կը լինի հէնց ինքը անգիտակից թուրք ժողովուրդը, որին սև մարմնի և խաւարի մէջ

պահելը շահաւէտ է թուրք իշխող դասակարգերի տեսակէտներց։ Երբ այդպիսի քաղաքներում հաստատուեն կուլտուրական փոքրամասնութեան իրաւունքները ապահովող ժամանակաւոր միջոցներ—տուժողը կը լինի յետաղէմտարրը, որ և ստիպուած կը լինի հրաժարուել իր նեղ կրօնացեղական աւանդութիւններից։ Այլապէս անարդար է հայի շինքից կապել թուրքի յետամսացութիւնը և այդ ծանր բեռի տակ խեղդել հային։ Ամեն կերպ օգնենք որ մեր հարևան թուրքը լուսաւորուի, քաղաքակրթուի, թողնի իր գաղանային ինստինկտները, սակայն մինչև մեր սերմերը հունձ բերեն՝ միջոցներ առնենք նրա տըսդութեան և ֆանատիկոսութեան տարերային արտայայտութիւնների դէմ։ Մենք մեր գիւղերի շուրջ ականներ էլ կը փորենք, պատճեններ էլ կը կանգնեցնենք, մետաղաթերերից ցանցեր էլ կը շինենք, իւրաքանչիւր կուողի ձեռքն զէնք էլ կը տանք, բարիկադներ կը շինենք, քանի որ այդպէս չվարուելով քարուքանդ եղանք. բայց այդ մեր ինքնապաշտպանական միջոցները չեն արգելում բարի հարևանների յարաբերութիւններ պահպանելու. այդ միջոցները խաղաղ թուրքերի դէմ չեն, այլ աւազակային ասպատակութիւնների դէմ։ Այդ աւազակներից պէտք է պաշտպանուել ինչպէս պաշտպանւուն ենք արիւնարրու գաղաններից, առանց դոնկիխոտական ճառերի։ Եւ հաւատացէք որ գաղանները այնքան խելք ունեն որ գիւղեն իրանց կաշիները հեռու պահել անվլէպ գնդակներից... Դայլի գլմին աւետարան կարդալը աննպատակ միջոց է։ Երբ նոր կարգերը խոր արմատներ կը գցեն մեր իրականութեան մէջ և կ'իրագործուի դրախտը, ուր վագրն ու գառը բարի հարևանութիւն են պահպանում այն ժամանակ ինքն ըստինքնեան կը վերանան ինքնապաշտպանութեան վայրենի գործիքները։ Խսկ մինչ այդ մեր քայլերը յարմարեցնենք մեր առաջ ընկած ճանապարհի յատկութիւններին. գեղեցիկ է աստղազարդ երկինքը, սակայն մենք ստիպուած ենք խորտուրորտ ճանապարհով քայլելու և մեր ոտների տակ նայելու...

Հ. Ս.

1 դեկտ. 1905 թ.